տեղեկացեալ զամենայն ծախս նորա, գրեցէք զգին յոյժ ընտիր և փառաւորին, թէև լինիցի աւելի քան զհազար վեցհարիւր ղուրշս. և թէպէտ փոքր է եկեղեցին մեր, սակայն գոլով ի մէջ օտար ազգաց, եթէ անարգ լինիցի երաժշտական նուագ շարականաց և երգոց մերոց, ոչ է ի դէպ. և զի տուօղն և չինօղն նորա այնպէս կամի, և դուք մի անարգէք զառատութիւն տուողին, և գիտեմ զի ոչ անարգէք։ Եւ զտիսէնիօ ճակատու երգեհոնին ըստ ամենայն զարդուց իւրոց յօրինել տուք տիսէնիատօրի ի վերայ թղթոյ միոյ, և ի միջին և յերևելի տեղւոջ տեղի նշանակեսջիք ուր գրեսցի անուն չինել տուողին և առաքեցէք, զի ցուցից տեառն գործոյն։ Եւ բաց յայսմանէ խնդրեմ զի գրեսջիք թէ որչափ դրամով չինեալ լինի յատուկ եկեղեցւոյն մէնմէռ քարամբ, և ինչ ինչ որ պիտանի է եկեղեցւոյ, նշանակեսջիք, ինչ ինչ հազար ղուրշի, ինչ ինչ հարիւրի, ինչ ինչ յիսունի, ինչ ինչ տասնի, ևն...։

Ցամի տեառն, 1768
Մայիսի 30
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Ճամպազօղլու Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]

ՄՀԸ.

Լիբանանու Հայ Վանքին պատկանող փոքրիկ բայց կարևոր վաւերաթուղթ մը կը հրատարակենք։ Հռովմ կը ղրկեն իրենց աշակերտները, անշուշտ առանձին բնակարանի մէջ. իսկ անոնց մեծաւորը Հ. Գաբրիէլ՝ Ս. Ղազարու երբեմնի միաբան մ'է։

Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Մկրտիչ Վարդապետին
կարօտիւ սիրոյ ողջոյն

... ի Լիբանանու եկին արդ չորք, և չորս ևս ի Նազար[է]թն են, ընդ ամէնն ութն անձինք, երեքն մանկունք փոքրահասակք իբրև զմերսն նոյն կերպիւ զգեստաւորեցեալք չալիւ, և վեցքն մեծազոյնք, յորոց երկուքն աշխատաւոր եղբարք են, և մինն քահանայ որ է Գոլէճցի Հ. Կարապետն գաղատացի։ Եւ երեք մնացեալքն են ուխտեալք իբր վարժարանցիք, գան աստ առ ի զարգանալ և ձեռնադրիլ, ևն. այժմ ընդ ամէնն Պետրոսիւն են չորեքտասան. թող զայլսն որք գալոց են հատէ հուտէ, աստի անտի։ Եւ գեղեցիկն այն է զի յայսմ ամի մեծաւոր արարեալ են զհայր Գաբրիէլ որ աստ, սակայն դեռ ոչ արարին փուլլիքար. և սպասեն Հ. Կարապետին և մնացելոցն։...

Գրեցաւ ի Հռոմ, 1768
Յունիս 5

Անարժան ծառայ
Հ. Գէորգ [Պաղտասարեան]

ՄՀԹ.

Կ. Պոլսոյ Հայ Կաթողիկեայց ուրոյն կազմակերպութեան փորձերը կը պատկերէ Հ. Յակ. Զամչեանցի հետևեալ կարևոր վաւերագիրը։

Գերամեծար Գերյարգելի Աբբայ Հօր մերոյ և յարգելիապետի
Տեառն Տեառն Ստեփանոսի վարդապետի, ողջոյն

Թղթ. ՃԼԳ.

Ի մարտի 7, Գերա. Աթանաս եպիսկոպոսն ժողովեաց զքահանայս, և զեպիսկոպոսս և զվարդապետս ի տուն իւր, և հրամայեաց գնել ի տունս զղումպարայս, յորում արկցեն